ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. հոկտեմբերի 27-ից 31-ը Սկոպյե (Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հովհաննես Աբրահամյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ք. Սկոպյե, Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն, 2025թ. հոկտեմբերի 27-ից 31-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Հյուսիսային Մակեդոնիայի էներգետիկայի, հանքարդյունաբերության և հանածո պաշարների նախարարություն/ՄԱԿ-ի զարգացման ծրագիր

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱ-ՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցություն Հանուն կայուն զարգացման էներգիայի հարցերով 14-րդ միջազգային համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվել են էներգետիկ բնագավառի զարգացման համաշխարհային միտումները, ներառյալ մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի համընդհանուր հասանելիության, էներգետիկ անվտանգության և միջազգային փոխգործակցության հետ կապված հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Գործուղման շրջանակներում կայացած «Կայուն զարգացման 7-րդ նպատակի ճանապարհային քարտեզից բխող առաջարկությունների իրականացման հնարավորությունները և կարողությունները» խորագրով պանելային քննարկմանը հանդես եմ եկել որպես խոսնակ, որտեղ ներկայացրել եմ Կայուն զարգացման 7-րդ նպատակի՝ Հայաստանի ճանապարհային քարտեզով նախատեսված աշխատանքների ընթացքը և հետագա տեսլականը:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակել աշխատանքները Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան հանձնաժողովների հետ՝ Ազգային մակարդակով սահմանված գործողությունների և կայուն զարգացման 7-րդ նպատակով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով:

9. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

11.11.2025թ.